

Մեկնարկեցին Սևան քաղաքի հիվանդանոցի նոր շենքի կառուցման աշխատանքները

17.08.2016

Օգոստոսի 16-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն աշխատանքային այցով եղավ Սևան քաղաքում: Մարզի ղեկավարը մասնակցեց Սևանի հիվանդանոցի նոր շենքի շինարարական աշխատանքների ազդարարման արարողությանը: Հիվանդանոցի շինարարությունն իրականացվում է Համաշխարհային բանկի միջոցներով և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ: Շինարարության պատվիրատուն ՀՀ ԱՆ Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակն է, իսկ աշխատանքներն իրականացվում է „Բիտեկ“, ՄՊԸ-ի կողմից: Կառուցվող հիվանդանոցի տարածքում արդեն կատարվում են մաքրման, ծառերի և թփերի հատման, հիմքերի նախապատրաստման, շինարարական տարածքի առանձնացման և նախապատրաստական բնույթի այլ աշխատանքներ: Ըստ նախագծի՝ երկհարկանի նորակառույցն ունենալու է 1370 քմ ընդհանուր մակերես, երկու մասնաշենք, նախատեսված 43 մահճակալի համար և անհրաժեշտ այլ օժանդակ կառուցներ: Եվրոպական չափանիշներին համապատասխանող հիվանդանոցը հազեցած է լինելու ժամանակակից սարքավորումներով և բժշկական գործիքներով, որոնց ձեռքբերման ուղղությամբ արդեն իսկ աշխատանքներ են տարվում: Սեւանի բժշկական կենտրոնի կառուցման մեկնարկի եւ նշանակության մասին իր գնահատականը տվեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: „Սեւան քաղաքին շատ էր անհրաժեշտ միջազգային չափանիշներին համապատասխան բժշկական կենտրոնի շենք: Սա սեւանցիների համար լինելու է դարի կառույց, անգնահատելի նվեր էր արդյունավետորեն ծառայելու է բնակչության կարիքներին: Սեւանի բժշկական կենտրոնի նոր շենքի կառուցումն ընդգրկված է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրում, ինչն արդեն իրականություն է դառնում: Շինարարության ընթացքում մարզպետարանը՝ իր հնարավորությունների սահմաններում պատրաստակամ է աջակցություն ցուցաբերել, - նշեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

„Վերջին տարիների ընթացքում Գեղարքունիքի մարզի առողջապահական համակարգի արդիականացման համար ՀՀ կառավարության եւ Համաշխարհային բանկ-ի կողմից կատարված ներդրումները կազմել են 3,5 միլիարդ դրամ՝ չհաշված Սեւանի բժշկական կենտրոնի համար կատարված ներդրումը: Անկախության 25 տարիներ ընթացքում սա 3-րդ տիպային նորակառույց հիվանդանոցն է լինելու և դա մեզ ավելի է պարտավորեցնում աշխատանքները լավագույնս ավարտին հասցնելու համար: Շինարարության պայմանագրային արժեքը կազմում է 885 մլն դրամ, ժամանակակից բուժսարքավորումների եւ գույքի ձեռքբերման համար նախատեսված է 750 հազար ԱՄՆ դոլար, - նշեց ՀՀ ԱՆ Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ-ի տնօրեն Նելսոն Զուլոյանը: Սևանի հիվանդանոցի շինարարությունը նախատեսված է ավարտին հասցնել 2018 թվականի օգոստոս ամսին, հավաստեց „Բիտեկ“, ՄՊԸ-ի շինարար՝ Արմեն Եգորյանը: